նախագիծ 42

Հայաստանի Հանրապետության Կառավարություն

# ՈՐՈՇՈՒՄ

-ի 2011 թվականի N -Ն

**Հայաստանի Հանրապետության 2011թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010թվականի դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմին գումար հատկացնելու մասին**

<<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին և 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. <<Հայաստանի Հանրապետության 2011թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի <<Հայաստանի Հանրապետության 2011թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին>> N1748-Ն որոշման NN 5, 10, 11 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3 հավելվածների:
2. Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմին անհրաժեշտ տրանսպորտային միջոցով ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության 2011 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2011 թվականի առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմին հատկացնել 9,300.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Տրանսպորտային սարքավորումներ>> հոդվածով):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Վ. Գաբրիելյան

Հավելված N1

ՀՀ կառավարության 2011թվականի
-ի N -Ն որոշման

**<<Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածում կատարվող վերաբաշխումը և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման N5 հավելվածում կատարվող փոփոխությունները**

հազար դրամ

| Բաժինը | Խումբը | Դասը | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասարկզման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | առաջին եռամսյակ | առաջին կիսամյակ | ինն ամիս | տարի |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | - | - | - | - |
| | | | այդ թվում՝ | | | | |
| 01 | | | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) |
| | | | այդ թվում՝ | | | | |
| | 01 | | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) |
| | | | այդ թվում՝ | | | | |
| | | 01 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) |
| | | | այդ թվում՝ | | | | |
| | | | 03,Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) |
| | | | այդ թվում՝ | | | | |
| | | | ՀՀ Նախագահի աշխատակազմ | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) |
| | | | որից՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածով | | | | |
| | | | <<Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում >> | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 11 | | | Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր | *9,300.0* | *9,300.0* | *9,300.0* | *9,300.0* |
| | | | այդ թվում՝ | | | | |
| | 01 | | ՀՀ Կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ | *9,300.0* | *9,300.0* | *9,300.0* | *9,300.0* |
| | | | այդ թվում՝ | | | | |
| | | 01 | ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդ | *9,300.0* | *9,300.0* | *9,300.0* | *9,300.0* |
| | | | 01.ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդ | *9,300.0* | *9,300.0* | *9,300.0* | *9,300.0* |
| | | | ՀՀ կառավարություն | *9,300.0* | *9,300.0* | *9,300.0* | *9,300.0* |

Հավելված N2
ՀՀ կառավարության
2011թվականի -ի N

**Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման N10 հավելվածում կատարվող փոփոխությունները և լրացումները**

հազար դրամ

| Անվանումը | Չափի միավորը | Ցուցանիշների |  | Գնման ձևը |
|---|---|---|---|---|
|  |  | Քանակը | Գումարը |  |
| ՀՀ Նախագահի աշխատակազմ |  |  |  |  |
| Բաժին N01 | Խումբ N01 | Դաս N01 | 03,Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում |  |
| Ծառայություններ |  |  | *(9,300.0)* |  |
| Այլ ավտոտրանսպոր տային միջոցների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայություններ | դրամ |  | (9,300.0) | ՄԱ |
|  |  |  |  |  |
| Բաժին N11 | Խումբ N01 | Դաս N01 | 01.ՀՀ Կառավարության պահուստային ֆոնդ |  |
| Ապրանքներ |  |  | *9,300.0* |  |
| Ավտոմեքենա | հատ | 1.0 | 9,300.0 | ԲԸԱՀ |

Հավելված N3

ՀՀ կառավարության 2011թվականի -ի N -Ն որոշման

**Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ դեկտեմբերի 23-ի N 1748-Ն որոշման N11 հավելվածի աղյուսակ N 11,2 -ում կատարվող փոփոխությունները**

| Չափորոշիչներ | | | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները նշված են փակագծերում) | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ոչ ֆինանսական ցուցանիշներ | | | | ֆինանսական ցուցանիշներ (հազար դրամ) | | | |
| | | | առաջին եռամսյակ | առաջին կիսամյակ | ինն ամիս | տարի | առաջին եռամսյակ | առաջին կիսամյակ | ինն ամիս | տարի |
| *Մաս Բ. Կառավարչական հիմնարկի անմիջական գործունեության արդյունքները* | | | | | | | | | | |
| Անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ցուցանիշները | | | | | | | | | | |
| Ծրագրային դասիչը | | Անվանումը ՝ Քաղաքականության, խորհրդատվության, մոնիտորինգի և համակարգման ծառայություններ | | | | | | | | |
| Ը 001 | ԱԾ 01 | Նկարագրություն՝ Պետական քաղաքականության մշակման և իրականացման ծառայություններ | | | | | | | | |
| Քանակական | | | | | | | X | X | X | X |
| Որակական | | | | | | | X | X | X | X |
| Ժամկետայնություն | | | | | | | X | X | X | X |
| Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ) | | | X | X | X | X | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) | (9,300.0) |
| Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը<br>Ը 001 Համապետական քաղաքականության մշակման և իրականացման ծառայություններ | | | | | | | | | | |
| Վերջնական արդյունքի նկարագրությունը<br>Հանրապետության կայուն զարգացման ու անվտանգության ապահովում | | | | | | | | | | |
| Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը<br>ՀՀ Նախագահի աշխատակազմ | | | | | | | | | | |
| Ծրագրային դասիչը | | Անվանումը ՝ Տրանսպորտային սարքավորումներ | | | | | | | | |
| Ս001 | ԿՀ 01 | Նկարագրություն՝ Տրանսպորտային սարքավորումների ձեռքբերում | | | | | | | | |
| Քանակական | | | | | | | X | X | X | X |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ակտիվի ընդհանուր արժեքը (հազար դրամ) | X | X | X | X | 9,300.0 | 9,300.0 | 9,300.0 | 9,300.0 |
| Ակտիվն օգտագործող կազմակերպության անվանումը<br>ՀՀ Նախագահի աշխատակազմ | | | | | | | | |
| Փոխարինվող ակտիվի նկարագրությունը | | | | | | | | |
| Ազդեցությունը կազմակերպության կարողությունների զարգացման վրա, մասնավորապես | | | | | | | | |
| Քանակական,<br>որակական,<br>ժամկետայնության և այլ չափորոշիչների փոփոխության վրա | Ակտիվն անհրաժեշտ է, որպեսզի պետական մարմինը ի վիճակի լինի Ը 001 Քաղաքականության, խորհրդատվության, մոնիտորինգի և համակարգման ծառայություններ ԱԾ 01 քաղաքական միջոցառման գծով քանակական, որակական և ժամկետային ցուցանիշներին ապահովլի | | | | | | | |
| Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը<br>Ը 001 ԱԾ 01Քաղաքականության, խորհրդատվության, մոնիտորինգի և համակարգման ծառայություններ | | | | | | | | |
| Վերջնական արդյունքի նկարագրությունը<br>Հանրապետության կայուն զարգացման ու անվտանգության ապահովում | | | | | | | | |
| Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը<br>ՀՀ Նախագահի աշխատակազմ | | | | | | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

375077, Երեւան, Մարշալ Բաղրամյանի պողոտա, 26
Հեռ. 588-757
520-277

«22» 03 2011թ.

Հ 21

## Տեղեկանք

Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի բնականոն գործունեությունը ապահովելու համար անհրաժեշտ է ձեռք բերել տրանսպորտային միջոց, որի արժեքը կազմում է 9,300.0 հազ.դրամ: Այդ իսկ նպատակով անհրաժեշտ է 01.01.01 «03.Գործադիր իշխանության պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի 4252 «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածի գծով տնտեսված միջոցները ուղղել այդ նպատակով:

Վարչության պետ [signature] Ս. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

375077, Երեւան, Մարշալ Բաղրամյանի պողոտա, 26
Հեռ. 588-757
520-277

«22» 03 2011թ.

Հ* 20

## Տեղեկանք

Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հայաստանի Հանրապետության 2011թ. պետական բյուջեում վերաբաշխում, ՀՀ Կառավարության 2010թ. դեկտեմբերի 23-ի N1748-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմին գումար հատկացնելու մասին» որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում, ինչպես նաև 2011թ. պետական բյուջեի ծախսերում և եկամուտներում ավելացում կամ նվազեցում, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջացնում:

Վարչության պետ Ս. Հակոբյան